Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

208.21
ग-50

Проф. М. Н. ПЕТРОВЪ ❁ Գրաֆ. Մ. Ն. ՊԵՏՐՈՎ.

ԱՒԵՏԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ռուսերէնից թարգմանեց

Աւետիս Տէր Յարութիւնեան

Խմբագրեց

Սիրական Տիգրանեան

Վաղարշապատ

Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

1902

АРМ.
2-232а 208.21
П-50
23 SEP 2009

Проф. М. Н. ПЕТРОВЪ ❀ Պրոֆ. Մ. Ն. ՊԵՏՐՈՎ

ԱՒԵՏԱՐԱՆԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ռուսերէնից թարգմանեց

Ա. Տէր Յարութիւնեան

Ուսանող Գէորգեան Ճեմարանի Ս. Էջմիածնի:

Խմբագրեց

Սիրակեան Տիգրանեան

Заказ № 216 Пор. № 87

Д имеет: 57 стр. ~~иллюстр.~~

табл. карт.

Примечания:

Расписка отв. за подгот. в перепл.

22.07.2013

3144

Доз. Цензур. 27 Ноября 1901 г. г. Тифлисъ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մասնիկյանի անվան
39839-63

ԱՒԵՏԱՐԱՆԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հաղիւ թէ պատմութեան մէջ լինի մի խնդիր, որի մասին այնքան շատ գրուէր, որպիսին է քրիստոնէութեան ազդեցութիւնը աշխարհի քաղաքակրթութեան վրայ։ Այն ժամանակից, երբ Եւրոպայում սկիզբն առաւ լուրջ պատմական գիտութիւնը, այսինքն անցեալ դարու սկզբից, ամեն տեսակ կուսակցութիւնների և համոզմունքների տէր մարդիկ հաւասարապէս գնահատեցին մեր կրօնի մեծ քաղաքակրթական դերը։ Նոյն իսկ այն գրողները, որոնք քրիստոնէութեան աստուածային ծագում ունենալը մերժում էին և նրա վրայ՝ որպէս լոկ պատմական

երևույթի վրայ էին նայում, աւելի ևս ջանք գործ դրին պարզելու այն ազդեցութիւնը, որ քրիստոնէութեան կրօնը ունեցել է նոր մարդկութեան վիճակի և բնաւորութեան վրայ։ Այդպիսի օրինակ կարող է ծառայել Բելգիացի ուսուցչապետ Լօրանը նորագոյն ժամանակի համար. նա իր մի երկի մէջ[1]) այնքան եռանդով է հետևում այս խնդրին, որ ընկնում է մինչև անգամ ոչ դիտական պատմական դուշակութեան մէջ։

Այսպիսի պայմաններում լիովին պարզաբանուած առարկայի մասին նորից դատել ու մտածել, թերևս լինի մեծ համարձակութիւն. սակայն կարծում ենք, թէ այս խնդիրն ունի այնքան անթիւ կողմեր, որ անկեղծութեամբ արտայայտած իւրաքանչիւր կենդանի անհատական տպաւորութիւն, ընդունակ է խորհող մարդու ուշադրութիւնը գրաւել։

Գիտական մատենագրութեան մէջ շատ անգամ է արտայայտուել այն միտքը, որ քրիստոնէութիւնը հեթանոսական ոգու դէմ մի մեծ յեղաշրջումն էր։ Այս միտքը պարզելու համար հարկաւոր է ուշադրութեամբ կարդալ Աւետարանը՝ աշխատելով մտքով պատկերացնել դէպքի այն հանգամանքները, այն անցքերն ու կեանքի բոլոր պայմանները, որոնց մէջ քարոզւում էր Քրիստի վարդապետութիւնը։ Այն հարցը, թէ ինչ էր այս վարդապետութեան հակառակութիւնը հին աշխարհի գաղափարների ու կարգերի վերաբերմամբ և հետևաբար ինչ նոր սկզբունքներ է կտակել Աւետարանը մարդկութեան, —կարող է պարզուել այս ճանապարհով։ Եւ ահա թէ ինչպիսի տպաւորութիւն է ստանում ընթերցողը, երբ համեմատում է Քրիստի վարդապետութիւնը նրա ժամանակակից պատմութեան հետ։

Տիբերեան ծովի բլրների վրայ տարածուում էր պետութեան մայրաքաղաքը՝ իր երկու միլիոն բնակիչներով, չորս հարիւր տաճարներով, երկու հազար ապարանքներով և տասնեակ հազար փոքրիկ բնակարաններով։ Ութսուն միլիոնից բաղկացած թագաւորութեան մայրաքաղաքը, երկրագնդի երեք աշխարհների լաւ քաղաքակրթուած կողմերին հրամայողը, կայսերական Հռոմը իր պատերի մէջ էր ամփոփել բոլոր

---

[1]) Etudes sur l'histoire de l'humanité.

կրթութիւնը և իւր ժամանակի պատմական աշխարհի ամբողջ ոյժը։ Պետութեան բնակիչների երկու երրորդ մասը, քաղաքի բնակիչների կէսը բաղկացած էին ստրուկներից. մնացած մասը միայն անունով էին քաղաքացի և բոլորի հետ հաւասարապէս հպատակ էին մէկի կամայականութեան։ Խռովութիւններով, նուաճումներով և փառքով յադեցած պետութեան մէջ կեսարներն առաջին անգամ ապահովութիւն և խաղաղութիւն յառաջ բերին դատապարտելով նրան մեքենայական բռնապետութեան կենցաղավարութեան։

Մտնենք այդ հոյակապ ապարանքներից մէկի մէջ, որոնցով լեցուն է քաղաքը և տեսնենք թէ ինչպէս են ապրում մարդիկ այդպիսի պայմանների և կարգերի մէջ։

Որմանկարներով և երփնաքարով (мозаика) զարդարուած ապարանքը, դորական սրահներով և էկսեդրաներով, լցուած հարիւրաւոր տարացեղ ծառներով, կաղմում են այդ լայնատարած շինութեան միայն չնչին մասը։ Շքեղ բաղնիքներ, ճկնարաններ, դաշնանոց, այգիներ, մինչև անգամ տաճարներ ու հրապարակներ—շրջապատում

են նրան՝ ծառայելով ամենաճոխ պերճութեան համար։ Մեծատոհմ միլիոնատէրի տունը մի ամբողջ քաղաք էր ներկայացնում, իսկ Հռոմը քաղաքների ժողովածու։

Հեռուում հնչող սիմֆոնիայի անդորրիչ հնչիւնների աղդմամբ քուն մտած հեշտասէրը զարթնում է ջրվէժների թարմ աղմկով և անհոդութեամբ մեկնում է ճեռքը, որպէս զի առաւօտեան այցելողների, ստրուկների և յաճախորդների ագահ խումբը համբուրէ։

Որպէս զի անտանելի երկար ժամանակը մեռցնի, նա որոնում է ամեն միջոց. սակայն այնպիսի բաւականութիւն չէր գտնում, որը իսկոյն ևեթ չը զզուեցներ։ Ամբողջ աշխարհի հարստութիւնը և զուարճութիւնը այստեղ էր կուտակուել, որպէս զի զարդարի նրա բնակարանը, լցնի և քաղցրացնի յարատև պարապ ժամանակը։ Նրա օթեակի յատակի վրայ փռուած են թանկագին քարեր. ամբողջ փայտից կոփածոյ սեղանը արժէ մեր փողով վաթսուն հազար ռուբլի, նրա փողոշները լողում են մարմարեայ աւազաններում և կերակրուում թարմ մարդկային մսով, նրա սիրամարդների և

սոխակների համար կառուցած են շքեղ հովանոցներ՝ շրջապատուած բոյսերով և թարմացնող բազմաթիւ շատրուաններով։

Նրա համար անտանելի է քաղաքը. դնում է իր շքեղ դաստակերտը՝ շինած պարտենոպեան ծոցի ափի վրայ, որտեղ և բարձր լեռներում և շառաչող ալիքների մէջ շինած էին նրա համար զուարճացնող շինութիւններ, ուր լիճը շրջապատուած է ծովափնեայ ժայռերով, որ տեղափոխուած են այստեղ անհաշիւ ծախսերով։

Նա ցանկանում է որպէս դիտական հռչակուել և հաւաքում է Թանկագին ձեռագրերի ամբողջ ժողովածու, որոնց անուններն էլ շատ անգամ չի իմանում. միւս կողմից ժամանակ էլ չունի։ Անհանգստանում է, չլինի թէ իր անուշահոտութեամբ օծուած գանգուր մազերից որ և է խոպոպ չի նստի ուսերի վրայ այնպիսի անհոգութեամբ և դեղեցկութեամբ՝ որպիսին պահանջում է իր ժամանակի նորաձևութիւնը, որ չլինի թէ իր սեղանը շրջապատող և ըստ հասակի, տարիքի կամ մորթու գոյնի շարքով կանգնած սարուկների խումբը հագնուած և սանտրուած չլինի անթերի միօրի-

նակութեամբ, նա յուզում է, չլինի թէ ծառաներից որ և է մէկը հիւրերի առաջ շարժումներ անելիս ու տեղ փոխելիս սխալուի կամ չը լինի թէ խնջոյքին յատկացրած նորանշան թռչունը նորաձևութեան պատճառով խոհանոցի արուեստի հակառակ որ և է կերպ կտրատած լինի։

Բայց ահա շուտով տաղտկանում է փարթամութիւնից և յագեցած բաւականութիւններով, մի քանի օր նա քաշւում է աղքատ խրճիթը, որը դիտմամբ շինած է իր պարանքի մէջ և որտեղ կաւի յատակի վրայ հասարակ ամաններով պինդ կերակուր է վայելում, մոռանալով առ ժամանակ իր ոսկէ վազերը և ամենոս քարեայ բաժակը,—և այս բոլորը նրա համար, որպէս զի նորից դառնալով փարթամ կեանքին, մի նոր, թարմ բաւականութիւն ղդայ։

Ամբողջ Իտալիան ծածկուած էր պարտէզներով, լճերով և ծառաստաններով, որտեղ մանրավաճառները նրա սեղանի համար ձուկ և որս են պատրաստում։ Հեռաւոր նահանգները մինչև անգամ նրա մառանների համար ընտիր մթերք են մատակարարում։ Կոսը տալիս է գինի, Թազոսը

— Թռչուն, Սիցիլիան — հաց, Ամերիկան — խեցիներ։ Խոհարարը իր արուեստի համար պատկուած էր ոսկէ պատկով։ Ընթրիքը նրատում էր երեք միլիոն սիստերցիա, մոտաւորապէս հարիւր և յիսուն հազար բուբլի։ Սիրամարգների լեզուներից կամ թռչունների ուղեղներից պատրաստած կերակուրը հռոմէական հաշուով հասնում էր երեսուն մինչև հարիւր հազար։

Ծիրանագեղ բազմոցներում բազմել են խոսակիցները, շրջապատուած կամակատար եւ սարկական պաշտօնեաների խմբով, որոնք գուշակում են նրանց ամենափոքրիկ ցանկութիւններն անգամ. մատաղ սարուկները արծաթէ մատուցարանների վրայ գեղեցիկ կերպով զարդարած կերակուր են մատուցանում, սիրուն դանդրահեր տղաները սպիտակ պատմուճան հագած գինի են մատուցանում, անուշահոտութիւն են փռում յատակի վրայ և հովհարում հիւրերին։ Սեղանի շուրջ տեղի են ունենում երգեր, պարեր, նուագածութիւն, ֆարսեր և վէճեր։ Եւ այսպիսի աղմկի, ուրախութեան մէջ, խնջոյքի թագաւորը, հիւրընկալը յաճախ կենաց բաժակներ է առաջարկում և թարմ

կանաչով ու վարդերով պսակում իր հիւրերին։ «Փութանք ապրել, ասում է նա, մահը մոտենում է, ծաղիկներով զարդարենք մեր գլուխները, մինչև չենք իջել Պլուտոնի մօտ»։

Այժմ դուրս գնանք այս նեղ տնային շրջանից դէպի յաւիտենական քաղաքի աղմկալից փողոցային կեանքը և հասարակական վայելքներն,— և այստեղ էս տեսնում ենք բարոյական շահերի նոյն բացակայութիւնը, նոյն դատարկութիւնը և նիւթապաշտութիւնը։

Ամֆիթէատրոնը առաւօտուց բաց է. ութսուն հազար հանդիսատեսներ խռնւում են նրա մարմարեայ աստիճանների վրայ։ Հասարակութեան սրտատրոփ սպասողութեան ժամանակ, ահա ասպարիզի վրայ բաց են թողնում աֆրիկայի վագրեր, առիւծներ ու յովազներ և ստիպում են կռուել միմեանց հետ։ Յետոյ նրանց դէմ դուրս են գալիս վայրենի դեթուլները և երկայնահեր գաղիացի սուսերամարտիկներ, որոնց յատկապէս շահագէտներն էին դատիարակում։ Գազանների հետ իրենց գործը վերջացնելուց յետոյ իրար հետ են սկսում կռուել։ Մարտնչում են կառքերի և ձիերի

վրայ և հեռիոտ, մարտնչում էին մինչև անդամ աչքերը կապած և այս առանձնապէս հասարակութեան հաճելի էր, բայց աւելի հրճուանք ու ցնծութիւն է առաջ գալիս, երբ ըստ դաղիական արուեստի (քեամանդով) թոկով և ցանցով մարդիկ էին որսում։

Իսկ չորս կողմ բարձրանում է մէկ անընդհատ, խլացնող աղմուկ. այս ճարպիկ և համարձակ հարուածների ու դեղեցիկ անկման և հոդաբաշխի տանջանքներին դիմանալու հաստատակամութեան համար քաջալերական աղաղակներ էին կամ թուլութեան, փոքրոգութեան և անշնորհքութեան համար՝ չարութեան ու դայրոյթի դոռում դոչում։

Երբեմն յանկարծ հանդիսականների մէջ բռնկւում է մարտնչելու տենչ։ Նոքա իրենք ասպարէզ են իջնում և կռուի մէջ մասնակցութիւն ունենում։ Սենատորը և աղատանին կռւում են, որպէս հասարակ ուսերամարտիկներ։

Բայց ահա ստորերկրեայ խողովակների միջոցով յանկարծ ասպարէզը լեցւում է ջրով և ներկայացնում մի լիճ, որտեղ լողում են կոկորդիլոսներ և ջրագամէշներ, քսան նաւեր,—երկու հակառակորդ նաւատորմիղ պատերազմի են դուրս գալիս։ Մահը հասարակութեան առաջ հանդէս է գալիս իր բոլոր ձևերով։ Մարդիկ խեղդւում են ջրի տակ, մեռնում են կրակից ու երկաթից։ Այդ նաւակռիւը հռոմէացու ամենասիրելի զուարճութիւնն է կազմում։

Վերջապէս ջուրը քաշւում է և խոնաւ ասպարիզի վրայ նորից սկսւում է մուշտակռուի կոտորած։

Ահա սուսերամարտիկը բռնում է իր տապալած հակառակորդի կոկորդից և սուրը բարձրացրած սպասում է հանդիսատեսների սովորական նշանին — reepe ferrum, — մինչդեռ թշուառականը թաւալւելով փոշու մէջ, աշխատում է նկարչական դիրք ընդունել, որպէս զի ի բաւականութիւն կրթուած հասարակութեան, մեռնի գեղարուեստի բոլոր կանոնների համաձայն։

Ահա մատաղահաս աղջիկը տեղից վեր է թռչում, խփում է ձեռքերը իրար, հրճուանքի ձայներ արձակում, երբ տեսնում է, թէ ինչպէս կռուողներից մէկը վայր է ընկնում ճարպիկ և ուժգին հարուածից։

Հաղարաւոր դորձիքների ձայներ միա-
խառնւում են ծափահարութեան աղմկի,
զոհերի հառաչանքների և հասարակութեան
լաց ու կոծի հետ։

Մեռաքսեայ ոսկուց կարած ծածկոցը
տատանւում է հանդիսատեսների վրայ,
պաշտպանելով նրանց արևի կիզիչ ճառա-
գայթներից։ Առանձնապէս պատրաստած
մեքենաներից ցօղում է անուշահոտ անձրև։
Զորս կողմ ամբողջապէս զարդարած է մար-
մարեայ արձաններով, հրաշալի քանդակնե-
րով և երփնաքարերով։

Իսկ այստեղ, մութ կամարների տակ,
ուր պատերի վրայ փորուած են անմաքուր
և փչացած կերպարանքներ, երևում են վա-
ճառելի դեղեցկութիւններ այնպիսի կա-
նանց, որոնք իրենց բունը չինել են մարդ-
կային արիւնով հեղեղած ասպարիզին կից։

Այստեղ ամբողջովին տիրում է սառն
տմարդութիւն, ճաշակի նրբութիւն, փար-
թամութեան յափրութիւն և անամօթ վա-
յելք, հրճուանք...

Այս տեսարանները որքան էլ ընդարձ
են, յամենայն դէպս համարեա ընդհանուր
պատկերի մի հաղիւ նշմարելի հատուածն

են ներկայացնում։ Բայց հարկաւոր է ժա-
մանակակիցների մանրամասն նկարագրու-
թիւնները կարդալ, կամ այնպիսի հեղինակ-
ներ, ինչպիսին է Դեղոբրի[1] և կոմս Դը—
Շամպանի,[2]) որպէս զի դաղափար կազմենք
ցոփութեան, սարկութեան, կեղծաւորու-
թեան, դատարկութեան և անպիտանու-
թեան այն խեղդիչ մթնոլորտի մասին, որի
մէջ ապրում էր այդ ժամանակի բարձր
դասակարգը, որպէս զի ըմբռնենք այն յա-
ռաւել թախիծը, որը այդպիսի հանդա-
մանքներում իւրաքանչիւր խորհող մարդուն
մաշում էր։ Կեսարների օրով հնարաւոր են
դառնում հասարակական ազատ դորձու-
նէութեան կատարեալ բացակայութիւնը,
ընտանեկան կապերի խախտումը, բարքերի
կատարեալ անկումը և կրօնական զգացում-
ների մնապաշտութեան ու կոպիտ նիւթա-
պաշտութեան փոխուելը,—կամ զզուանք
էին յառաջացնում դէպի այդ անբովանդակ
կեանքը «taedium vitae», որը վերջանում է
յաճախ ինքնասպանութեամբ, կամ ստի-

---

1 Rome au siècle de Auguste.

2 Les Césars.

պում էին մարդուն ընկնել անսանձ հեշտասիրութեան մէջ, որը կարողանում էր դէթ մի առ ժամանակ հանդարտեցնել դատարկութեան տանջող ձանձրոյթը։

Այսպէս էին ապրում այդ ժամանակի լաւագոյն առաջաւոր մարդիկ։ Իսկ մեծամտութիւնը նեղում էր ազնուութեան, աղքատութեան և տարկուութեան մէջ։ Մինչև անասնական աստիճան ստորացած մարդկանց վրայ ոչ ոք չէր մտածում, ոչ ոք չէր ընդունում մինչև անգամ նոցա մարդկային արժանաւորութիւնները։

Ստրուկը անձնական և ստացուածքի ոչ մի իրաւունք չունէր և համարւում էր իր տիրոջ իրը, սեփականութիւնը։ Մինչև անգամ որդիները իրեն չէին պատկանում; այլ տիրոջը, կարծես թէ ձիու կամ կովի աճում լինի։ Աղջանուն ևս չունէր և նրան կանչում էին ուղղակի որ և է մականունով։ Ստրուկների մահուան և կեանքի իրաւունքը կախուած էր իր տէր քաղաքացուց և շատ հեշտ է երևակայել, թէ այդպիսի մի իրաւունք ինչպիսի չարագործութեան առիթ եղած կլինի գոռող և անգութ բռնակալների համար, որոնք միշտ սարսափում էին

այդ բաղմաթիւ և յուսահատութեան հասցրած տանջուողների խռովութիւնից։ Այս անլուր և բթացած ամբոխի իւրաքանչիւր հայեացքին և շարժմունքին նոքա կասկածաւոր կերպով հետևում էին և բաւական էր որ դոցանից որ և է մէկը ամենաչնչին սխալն անէր ծառայութեան մէջ կամ տիրոջ տուած որ և է նշանը չնկատէր, որ սարսափելի պատիժներ կրէր։ Թշուառներին տեղում էին երկաթէ շղթաներով, պատառոտում էին սուր կարթերով և դրոշմահարում շիկացած երկաթով։ Խաղաղ գիշերը Հռոմի փողոցով անց ու դարձ անողները յաճախ լսում էին հառաչանքներ, մտրակի հարուածներ և շղթաների ձայներ այն խոնաւ ու խեղդիչ նկուղներից, ուր գիշերները ստրուկները պահւում էին ոչ այլ կերպ, եթէ ոչ միայն պատերին դամած։ Ստրուկը չէր կարող բարեկամանալ մէկի հետ կամ մօտ լինել ընկերներից որ և է մէկին, որովհետև իւրաքանչիւր նման դէպքերում տերը միաբանութիւն և դաւադրութիւն էր տեսնում։ Վերջապէս հիւանդ և հաշմանդամ ստրուկը, որպէս անօգուտ կենդանի, դուրս էր ձգւում Տիբրոսի կղզիներից մէկը, որտեղ և

39839-67

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԱԳՄ ԳԿՊ
Ա. Մ. Մասիսյանի անվան

մեռնում էր առանց որ և է խնամքի։ Մինչև անգամ օրէնքը գթասրտութեամբ չէր վերաբերւում այդ դժբախտներին և թէպէտ մի քանի կայսրներ իրենց օրէնսդրութիւններով աշխատում էին թեթևացնել դրանց վիճակը, բայց մինչև անգամ լաւագոյն կեսարների ժամանակ սովորոյթ էր, որ որ և է մի տիրոջ պատկանող ստրուկներին, որոնք երբեմն մի տան մէջ հարիւրներով էին լինում, բոլորին էլ կտորում էին, եթէ դոցանից մէկն ու մէկը յանդգնել էր սպանել տիրոջը։ Ամենաչնչին հեռախուզութիւնների համար գործադրւում էր տանջանք (пытка), իսկ խաչի վրայ մահը ամենասովորական պատիժներից էր։

Մարդկութեան համար հռոմը շատ բան է արել, բայց նրա ամբողջ փառաւոր պատմութիւնը այսպիսի յանցանքների քաւութեան համար միջոց չի կարող ծառայել։

Իսկ ինչպէս է գաւառների վիճակը, որ ձեռք էին բերուած սրով և կառավարւում բռնադատութեամբ։ Կասկածելի է, որ նուաճողներից ստացած գաւառների միատեսակ քաղաքակրթութեան բարիքները

կարողանային վարձատրել այն կանոնաւոր յափշտակութիւնների, աւերումների և ստրկութեան փոխարէն, որին ենթակայ էին հռոմայեցիներից նուաճած ազգերը։ Դրանց դառն վիճակը կարելի է համեմատել միայն այժմեան Օսմանեան տէրութեան բայեաների վիճակի հետ, իսկ գաւառական վարչութեան գլուխ կանգնած պրոկոնսուլներին՝ հին ժամանակի փաշաների հետ։ Երբ այդպիսի մի կառավարիչ մուտք էր գործում իր գաւառի մայրաքաղաքը, կարծես թշնամիների զօրքը գրաւում է այդ քաղաքը։ «Մեր գաւառները հառաչում են, գրում էր դեռ Կիկերոն, ազատ ազգերը դանդատւում են, աշխարհի բոլոր պետութիւնները մեր հարստահարութիւնների և գազանութիւնների դէմ բողոքում են։ Մինչև ովկիանոս չկայ մի այնպիսի հեռաւոր և գաղտնի երկիր, ուր մեր անարդարութիւնները և բռնակալութիւնը մուտք չգործէին։ Հռոմայեցի ժողովուրդը այլ ևս անզօր է տանել ազգերի ոչ թէ ապստամբութիւնները և կռիւները, այլ դրանց հեծեծանքներն ու արտասուքները»։ Եւ այսպիսի զայրոյթով է արտայայտում այն մարդը՝ որը, փոքրիկ Կի-

լիկիան ընդ ամէնը մի տարի վարելով, միլ-
լիոն սիստերցիա ձեռք բերեց։ Իսկ ինչ
ասել ուրիշների՝ աւելի քիչ բարեհոգի կա-
ռավարիչների համար։ Ի՞նչ ասել նահանգ-
ների սարսափելի տնտեսական սպառման
մասին, երբ բացի պրոկոնսուլների և պաշ-
տօնեաների խմբի մանաւոր թալանից, ըն-
կած էր նոցա վրայ պետական հարկերի
ամբողջ ծանրութիւնը, որի հաւաքելու ժա-
մանակ սովորաբար տեղի էր ունենում կա-
պալառուների կողմից հարստահարութիւն-
ներ, չունեւորների համար տանջանքներ և
սրա նման արհաւիրքներ։

Պէտք է պատկերացնել այս սակաւա-
թիւ ընտրեալների ամբողջ աշխարհը, որոնք
թաղուած հարստութեան և վայելքի մէջ,
դարձեալ տանջւում էին անելանելի անձ-
կութիւնից, և մշտական դժբախտութեանց
դատապարտուած միլլիոնաւոր իրաւազուրկ
մարդկանց, պէտք է պատկերացնել սան-
ձարձակ եսապաշտութեան և սարսափելի
տանջանքների այս աշխարհը, և միայն
այն ժամանակ կգնահատենք անհուն յե-
ղաշրջման խմաստը, որ առաջադրեց աւե-
տարանական վարդապետութիւնը։

Երբ Գալիլիական ծովեզրից հնչեցին
«սիրեցէք ձեր մերձաւորներին, ինչպէս ձեր
անձը» մխիթարական խօսքերը, արդարև
այս մեծ նորութիւն, ուրախ «աւետիք» էր
մարդկութեան համար։ Լաւագոյն յա-
բաբերութիւնների մի ամբողջ հեռանկար,
ամբողջ երջանիկ ապագայ բացւում էր նոցա
առաջ։ Հասարակութեանը տանջող չարիք-
ներին առաջին անգամ բուժիչ դաղտնիքը
գտնուեցաւ. անհասկանալի ոյժը կեանքի
մէջ մնաւ, որպէս զի ջերմացնի, աղնուացնի
և երջանկացնի նրան։

Այդ ոյժը սէրն էր։

Պէտք է սիրել, հաճոյ լինելու համար
Աստուծոյ, երջանիկ լինելու համար երկրի
վրայ, սիրել ոչ միայն մերձաւորներին և
արիւնակիցներին, այլ բոլորին և իւրաքան-
չիւրին, մինչև իսկ թշնամիներին,—և ապ-
րել ուրիշների համար այնքան, որքան և իր
համար։ Այն ժամանակ կեանքը դին և հե-
տաքրքրութիւն կստանայ, նրա ուրախու-
թիւնը ձանձրալի չի լինի և կթեթևանան
նրա դժբախտութիւնները։ Կարող է ար-
դեօք, որ և է փիլիսոփայութիւն այսպէս
հասարակ, ճիշտ և մի և նոյն ժամանակ այս-

քան խորը լուծել երկրային գոյութեան խնդիրը և ցոյց տալ նրան առաջնորդող օրէնքը։

«Երանի աղքատաց հոգւով, հեզոց, ողորմածաց. երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, երանի խաղաղարարաց, — երանի սգաւորաց, երանի որ հալածեալ լցեն վասն արդարութեան,—եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»... Երկնային լեզու էր սա, անծանօթ բոլորովին այդ ժամանակի աշխարհին։ Այս կերպ խօսել, նշանակում է մարդկային սրտի վրայ իշխելու հաստատուն ճանապարհ բաց անել, բայց այդպէս խօսել հռովմէական պետութեան կարգերի ժամանակ, նշանակում էր միլիօնաւոր մարդկանց անյոյս տանջանքների վրայ այնպիսի բուժիչ սփոփանք թափել, որ միւս անգամ այդ ձայնը լսելուց յետոյ, մարդիկ նրան հետևեն դէպի տանջանքներ, հալածանք և մահ։

Կրթուած և այլակերպած Աւետարանով, մենք այժմ ընտելացել ենք նրա մարդկային ոգուն և իւրաքանչիւր օր Փրկչի աղօթքն ենք կարդում առ Աստուած, յանախ

և կանգ չառնելով այն բանի վրայ.—ինչպիսի վեհ դաղափար է պարունակում նրա հասարակ տկզբնական խօսքերի մէջ—«Հայր մեր, որ յերկինս ես։» Սոցա անհուն իմաստը իր ամբողջ խորութեամբ ամենից աւելի պատմաբանօրէն է ըմբռնւում։ Ամենամեծ անհաւասարութեան, որպիսին երբ և իցէ տեսել էր աշխարհս, և հասարակական երկնաբողոք անարդարութիւնների ժամանակ, որ տեղի ունէին Հռովմում, այս բառերի մէջ հասկացողութիւններին և զգացմունքներին արմատապէս հակառակ, մարդկութեան նոր իդէալ է առաջ դալիս։ Բոլոր մարդիկ եղբայրներ են և իրենց անսահման սիրող երկնային մի և նոյն Հօր որդիք... Հեթանոսական հնութիւնը իր քառասուն դարեան զարգացմամբ անզօր էր մինչև այսպիսի հասկացողութեան աստիճանը բարձրանալու, իսկ մեր ժամանակը իր հպարտ առաջադիմութեամբ չկարողացաւ մի աւելի կատարեալ բան ստեղծել. պէտք է ենթադրել, որ հեռագոյն ապագան ևս երբէք չի դերազանցի դրան։

Ուրեմն «սիրոյ վարդապետութիւնը», որ փոքր առ փոքր փոխեց մարդկային կեանքի

ամբողջ կազմութիւնը և իմաստը, — ահա առաջին և գլխաւոր կրթական ծառայութիւնը, որ արել է քրիստոնէութիւնը պատմութեան մէջ, — և ամենահամարձակ բանապաշտութիւնը (раціонализмъ) միշտ պիտի խոնարհուի։

Ապա ինչ որ Աւետարանը պատմաբանօրէն ուսումնասիրողին ապշեցնում է, նրա վսեմ «հոգևորութիւնն» է, որ տարածուած է ամբողջ այդ ստեղծագործութեան մէջ։

Վարդապետելով միայն հոգևոր շահերի՝ ճշմարտութեան, արդարութեան և բարութեան կարևորութիւնը, խոնարհութեան, ինքնազոհութեան և բարոյական սրբութեան հրաւիրելով, քրիստոնէական ուսումը և այս մտքով մի կարուկ բողոք հանդիսացաւ հին աշխարհը ապականող սարսափելի անբարոյականութեան, նիւթապաշտութեան և զգայականութեան դէմ։

Այս «հոգևորութիւնը» արտայայտւում է Փրկչի քարոզներում երեք գլխաւոր գաղափարների մէջ, որոնք այսպէս ասած իշխում են բոլոր մասնաւոր դէպքերի վրայ, որոնց առթիւ Աստուածային Վարդապետը ուսուցանում էր փրկութեան և կեանքի իր խօսքը։

այդ երեք գաղափարներն են՝ հոգու տիրապետութիւնը բոլոր ձևերի վրայ, հոգևորի տիրապետութիւնը բոլոր նիւթականի վրայ, և նախապատիւ նշանակութիւնը, որ ընծայւում էր անհատական կեանքին հասարակական և քաղաքական գործունէութեան վերաբերմամբ։

Աւետարանի այս առանձնայատկութիւնների վրայ առանձին առանձին կանգառնենք, որովհետև գլխաւորապէս սրանցով է որոշւում հեթանոս հնութեան ամբողջ ոգու աւետարանի հակառակ լինելը։

Որպէս զի առաջին գաղափարի պատմական արժէքը որոշենք, անհրաժեշտ է յիշել, որ հին և մանաւանդ կլասիք ազգերի քաղաքակրթութեան տիրող բնոյթը պլաստիկան էր, որով հոգևոր բովանդակութիւնը վեր էին ածում սահմանաւոր և ըմբռնելի հաստատուն ձևերի։ Եւ թէպէտ այս յատկութիւնը շատ էր նպաստում անտիկ կեանքի ձևերի անսովոր գեղեցկութեան և կատարելութեան, բայց միւս կողմից ամենագլխաւոր պատճառն է հանդիսանում, որ հին կրթութիւնը դանդաղ է շարժւում և վերջանում է կատարեալ անշարժութեամբ, երբ,

այսպէս ասած, հոգևոր բովանդակութեան այն որոշ պաշարը ստացուեց, թողնելով միայն իրանից յետոյ փայլուն, բայց դատարկ ձևեր։ Նախաքրիստոնէական շրջանի վերջին գործունէութեան շրջաններում ընդհանուրի համար մանաւանդ առելի է դառնում ոգու այսպիսի նուաստանալը, և կեանքը սակաւ առ սակաւ դառնում է ծէս, որի հոգին վաղուց արդէն հեռացել էր։

Որպէս զի մարդուն նորոգենք նոր, անսպառ բարոյական կեանքի համար, ամենից առաջ նրա հոգու անյաղթելի ոյժերի և սեփական զօրութեան մէջ պէտք է վստահութիւն և համարձակութիւն ներշնչել։ Եւ ահա հնչում է Փրկչի ձայնը. «եթէ հաւատ ունիք և չէք կասկածում, ասացէք այս լերան,—թող տեղից շարժուի և ընկնի ծով,- և կլինի»։ Ոչ մի ժամանակ մարդկային ոգին չէ հասել այնպիսի զարմանալի բարձրութեան, ինչպէս այս խօսքերի մէջ. և ոչ մի ժամանակ աւելի հաստատ և բացարձակ կերպով չէ արտայայտուել այն համոզմունքը, որ հոգին է տիրապետում աշխարհիս վրայ։ Երկրիս վրայ բոլորը, նոյն ինքը բնութիւնը, պէտք է հպատակեն այսուհետև ոգու վե-

հագոյն կամքին և մտքին։

Յետոյ մենք տեսնում ենք, թէ ինչպէս այս դաղափարից Աւետարանի յարատև ձգտումն է բղխում, այն է ազատել մարդուն բոլոր ձևերից, սիմբոլներից և ծէսերից, որոնք մի ժամանակ արդելում էին նրա զարգացողութիւնը ու կաշկանդում նրա հանճարի ազատ թռիչքը։ Փրկչի կրօնը բոլոր կրօններից ամենապայծառն և ամենամատչելին է։ Լցուած անկեղծութեամբ, պարզութեամբ և ճշմարտութեամբ, Փրկչի կրօնը թէ ամբողջ աստուածպաշտութիւնը և թէ ամբողջ բարոյականութիւնը կապում է սրտի ձայնի և մարդու խղճի հետ։ Այստեղից հասկանալի է փարիսեցիական խմաստութեան և բարեպաշտութեան անխնայ անարդելը, որովհետև սրանք հիմնւում էին օրէնքի արտաքին ձևականութեան վրայ, ինչպիսին նրա մէջ պատահում ենք ամեն քայլափոխում։ Սրանից յետոյ ոչ ծէսը և ոչ էլ տառը էական նշանակութիւն ունին, այլ ոգին, մարդու միտքը, ինչ ձևերով նա արտայայտուէր,—«որովհետև մարդոյ Որդին շաբաթուայ տէրը դարձաւ»։ Այդ ժամանակից արդէն դռներ կբացուի դէպի

մարդկութեան անվերջ կատարելութիւնը և այնուհետև մարդկութիւնը չի ճնշուիլ այլ ևս կեանքի ոչ մի մշտական ձևով. կսկսի տիրապետել նրան, ստեղծել և քանդել այդ ձևերը օրէնքների և իրաւունքների պահանջների համաձայն։

Աւետարանի վարդապետութիւնը՝ հոգևորի տիրապետութիւնը զգայականի վրայ՝ ունի նաև պատմական բաղմակողմանի նշանակութիւն։ Հարկաւոր է թեթև կերպով հետևել կեանքի անհատական, հասարակական և քաղաքական շրջաններում հեթանոսական հնութեան բնաւորութեանը, որպէս զի հասկանալի լինին Փրկչի վարդապետութեամբ դոցա մէջ առաջացած փոփոխութիւնները։

Ինչ վերաբերում է հին մարդու ներքին կամ հոգեկան կեանքին, պէտք է ասել, որ այն պատճառով էր կրում իր մէջ անխուսափելի նիւթապաշտութեան սերմերը, որովհետև զգայականութիւնը խորապէս արմատ էր ձգել այս կեանքի հէնց կեդրոնում և աղբիւրում, այսինքն կրօնական հասկացողութիւնների մէջ։ Ցիշենք այստեղ, որ եթէ ի նկատի չառնենք հին ժամանակի փի-

լիսոփայական և աստուածդիտական սիստեմները, որոնք յատուկ էին քչերին՝ շատ զարգացած ընտրեալներին, — հին աշխարհի սովորական ժողովրդական կրօնները «բնական» կրօններ էին։ Զարգացման ստորին աստիճանի վրայ կրօնները սահմանափակուում էին միայն բնութեան մէջ եղած նիւթական առարկաներին — այսպէս ասած ֆէտիշներին երկրպագութեամբ, իսկ բարձր աստիճանի վրայ բնութեան այժերը զանազան պատկերների և սիմբոլների մէջ մարմնացած աստուածացնելով։ Բայց թէ այստեղ թէ այնտեղ ամենուրեք տեսնում ենք բնութիւնը, որ իր իշխանութեամբ, հզորութեամբ ծանրանում է մարդու ազատ գիտակցութեան վրայ։ Հին ժողովրդների հաւատալիքների մեծ մասը կախուած էր այն երկրների տեղական պայմաններից, որի մէջ ապրում էր ժողովուրդը։ Այսպէս օրինակ՝ Եգիպտացին իր կրօնական հասկացողութիւնների մէջ իր երկրի տեղական առանձնայատկութիւնները աստուածացնում էր։ Նեղոսի հովտի պտղատու հողը բարեբեր Իզիդի անուամբ պաշտուում էր, — Նեղոսը, որ բերում էր պտղաբերութիւն և

արև, որի պարբերական հոսանքի հետ կապուած են նրա հեղեղները, պաշտուում էր վեհագոյն Օղիրիսի պատկերով, որ աղբիւր է ամեն բարեաց, իսկ սարսափելի հարևան անապատը, որ աղբիւր է մահուան և չարեաց, պաշտուում էր չար ոգի Տիֆոնի պատկերով։ Եւ ինչ էլ որ լինէր այն յետագայ վերացական զարգացումը, որ ապագայում այս պաշտամունքները ստացան քուրմերի ջանքերով, կասկած չկայ, որ դրանք սկզբում ունէին այս պարզ նիւթական միտքը, իսկ ժողովրդի մէջ այդպէս մնացին մինչև ամենաուշ ժամանակները։ Նոյնպէս է զարգացել հին Իրանական ազգերի երկու գերագոյն աստուածների պաշտամունքը։ Ահուրա-Մազդի և Ահրի—Մանի կամ ըստ սովորական ասութեան Որմզդի և Արեմանի պաշտամունքը առաջացել է, ինչպէս ճիշտ ենթադրում են, լեռնոտ, պայծառ և երկրագործ Իրանի ու հարևան վայրենի, անապատ, վայրագ թափառական ցեղերով բնակեցրած Թուրանի զօրեղ հակադրութիւնից։ Այս երկու երկրների սոյն թշնամութիւնը դուցէ բարոյ և չարի ծագման, լուսոյ և խաւարի թագաւորութեան միջի յարաև

կռուի պատկերով արտացոլել է այդ երկրների բնակիչների կրօնական հաւատալիքի մէջ։ Ցոյն-իտալական ժողովրդի սկզբնական կրօնական հասկացողութիւններն ևս ունեն սոյնպիսի դգայական բնաւորութիւն։ Դեմետրա, Հերմէս, Պերսեֆոն, Հադէս, — Հելլադի պելազգեան պաշտամունքների ամբողջ շրջանը Կ. Օ. Միւլլերի և Պրելլերի կարծիքով խթոնեան աստուածութեան մի շարք է ներկայացնում կամ իր նիւթական բնութեան ոյժերի պաշտամունք։ Մինչև անգամ Հոմերոսի ժամանակ, երբ յոյների հաւատը հետզհետէ որոշ անտրոպոմորֆիկ բնաւորութիւն էր ստացել, պաշտամունքի գլխաւոր առարկայ կազմում էին մարդու յատկութիւնները, ոյժը և քաջութիւնը, այսինքն ֆիզիքական և բարոյական բնութիւնը կրոնին էլի բովանդակութիւն էր տալիս։

Սորա համար է, որ հեթանոսական աշխարհի բոլոր աստուածութիւնները մասնակի հետաքրքրութիւն ունին։ Նրանք անխզելի կերպով կապուած են իրենց տեղի և ցեղի կամ մինչև անգամ տարբեր առանձին դասակարգերի և տոհմերի հետ, որոն-

ցից դուրս ոչ մի միտք չունէին։ Եթէ ժողովուրդը թողնում էր իր հայրենի երկիրը կամ երբ կրօնական հասկացողութիւնները տեղափոխւում էին ուրիշ տեղ, իսկոյն կորցնում էին իրենց ամբողջ կենդանի նշանակութիւնը։ Կայսերական շրջանում Հռովմը աչքի ընկնող օրինակը կծառայէ, ուր հաւաքուել էին այդ ժամանակի աշխարհի բոլոր կրօնները, այնպէս որ ըստ Պետրոնի սրամիտ արտայայտութեան, քաղաքը մաւեալ շատ աստուած կար, քան մարդիկ։ Բայց այս անթիւ պաշտամունքները, որ զանազան վայրերից և պետութեան բոլոր սահմաններից փոխադրուելով այստեղ՝ նոր, իրենց համար օտար տեղի վրայ, բնականաբար պէտք է կորցնէին իրենց առաջուայ ոյժը։ Նեղոսի ափերին Իզիդրի երկրպագութիւնը, ի հարկէ, ունէր իր նշանակութիւնը, բայց փոխադրուելով Իտալիա, ուր չկար ոչ Նեղոսի հովտի հողը և ոչ էլ դեռ ի պարբերաբար հեղեղումը, անբովանդակ հանդիսացաւ և դատարկ ու լոկ ծիսակատարութիւն դարձաւ։

Այստեղից է ընդհանրապէս հին կրօնների վաղանցուկ լինելը և զարմանալի չուտափոյթ անկումը քրիստոնէութեան դարդացող յաջողութիւնների առաջ, որը ընդհանուր, համամարդկային և զուտ հոգևոր կրօն էր և չէր կապուած ոչ ազգի, ոչ տեղի և ոչ էլ ժամանակի հետ։ IV և V դարերի ազգերի մեծ շարժումը, ցեղերի դաղթի այդ մեծ շրջանը մի և նոյն ժամանակ մի շրջան էր, ուր Աւետարանը հեթանոսութեան վրայ վերջնականապէս փառաւոր յաղթութիւն տարաւ։ Թողնելով իրենց հայրենիքի սարերը ու դաշտերը, թողնում էին նաև նաև սրանց հետ կապուած կրօնական հասկացողութիւնները և օտար ու անծանօթ տեղեր էին բերում իրենց աղտա սրտերը, որոնց մէջ Աստուծոյ խօսքը հեշտութեամբ էր գտնում ընդունակ հող։ Արևմտեան հոգևորականութիւնը մեծ դժուարութիւն չէր կրում քրիստոնէութիւնը ընդունել տալ գոթերին, ֆրանկներին, բուրգունդներին և ուրիշ գերմանացոց, որոնք թողել էին իրենց հին հիւսիսային հայրենիքը, բայց Կարլոս Մեծը ստիպուած էր երեսնամեայ աւերիչ պատերազմով լուսաւորել սակսերին, դուցէ այդ նարա համար, որ հիւսիսային – գերմանական սակսերը երկար մնալով Էլբայի մօտիկ եր-

Գ-ՊՈՒ

կըներում, որտեղ իւրաքանչիւր բլուր, իւրաքանչիւր աղբիւր նրանց համար որ և է սուրբ նշանակութիւն ունէր, դրա հետ էլ միասին յամառ կերպով մնում էին իրենց հին կրօնական հասկացողութիւնների մէջ։

Կրկնում ենք, որ Աւետարանը ոչ տեղական և ոչ էլ ցեղական բնաւորութիւն ունի։ Իր սկիզբը ոչ թէ զգայական կամ նիւթական տպաւորութիւններից է առնում, այլ ի վերուստ հոգևոր լուսաւորութիւնից։ Հրատարակելով, որ «Աստուած հոգի է և նրան պէտք է հոգով և ճշմարտութեամբ երկրպագել», Աւետարանը սրանով մարդկութեան կրօնական գիտակցութեան մէջ մի մեծ յեղաշրջում է առաջ բերում։ Այսպիսի մի գաղափար, որ մեզ համար պարզ և բնական է թւում, շատ հին ժամանակներում անթիւ միլիոնաւոր մարդկանց համար խիստ մեծ գիւտ էր. այդ գաղափարը զրկեց բնութեանը նախնի ամենակարողութիւնից և աստուածայնութիւնից և ցածրացրեց նրան մինչև ծառայական հլու հնազանդ նիւթի աստիճանը։ Հենց դրանով մարդկային հոգու համար, որ այդքան երկար ճնշուած էր նրա իշխանութեան տակ, ճանապարհ բացուեց

դէպի բազմակողմանի զարգացողութիւն և յառաջադիմութիւն։

Սոյնպիսի մի փոփոխութիւն Աւետարանը յառաջ է բերել նաև հին աշխարհի հասարակական կեանքում։

Յայտնի է, որ հին ժամանակ պետական կենցաղավարութեան աղբիւր և գլխաւոր կենսական սկզբունք համարւում էր տոհմական, ազգակցական և արիւնակցական կամ ուրիշ խօսքերով նիւթական և զգայական մի և նոյն ֆիզիքական բնութիւնը, որ հին մարդու հոգեկան կեանքի վրայ իշխում էր, ընորոշում էր նաև սոցիալական յարաբերութեանց բնաւորութիւնը։

Որպէս զի փաստօրէն համոզուենք այս բանում, բաւական է մի քանի գլխաւոր կէտերում յիշել նախաքրիստոնէական դանազան պետութիւնների հասարակական կազմակերպութիւնը։

Սկսելով ամենահեռաւոր և ամենահին արևելքից՝ Չինաստանից, մենք տեսնում ենք, թէ ինչպէս տոհմական սկզբունքը իր սկզբնական բոլոր պարզութեամբ թափանցել է այդ երկրի հասարակական ամբողջ կեանքի մէջ։ Շու-կինգի տեսութեամբ

Բոզդոխանը իր հպատակների ընդհանուր հայրն է և անսահման հայրական իշխանութիւն ունի բոլորի վրայ։ Դրա մեծ որդիները՝ Մանդարինները, որանց տեսչութեան ենթարկուած անձինք՝ կրտսերները կազմում էին այս սոցիալական դասակարգութիւնը, որ ընդգրկում է բովանդակ պետութիւնը, այնպէս որ երկու հարիւր յիսուն միլիոն ժողովուրդը կազմում էր գոնէ գաղափարով մի ընտանիք, որ բնական ճնշման զօրութեամբ զարգացել է մինչև այս ահռելի չափը։

Աստուածպետական տէրութիւնների մէջ, որտեղ հասարակական կազմակերպութիւնը հիմնուած էր կաստաների զանազանութեան վրայ, ինչպէս Հնդկաստանում և Եգիպտոսում, տոհմական սկզբունքը պահում էր նման իսկ այժ, որովհետև կաստայական իսկ բաժանումը մեծ մասամբ հիմնուում էր նոցա տոհմական տարբերութեան վրայ։ Այսպէս, Հնդկաստանի երեք բարձրագոյն կաստաները՝ բրամաները, կսատրաներ և վայսիներ ոչ մորթու գոյնով, ոչ լեզուով, ոչ էլ մասաւոր ընդունակութիւններով նման չեն չորրորդ կաստա կազմող բնիկ սուդրաներին — , որոնց նուաճել են հիւսիսից եկած արիական աշխարհակալները։ Եգիպտոսի բարձրագոյն կաստաները թերևս նոյնպէս եկուորներ են Մէրօէլից, ինչպէս հնում էին կարծում, կամ փոքր Ասիայից, ինչպէս ենթադրում են այժմեան նորագոյն եգիպտագէտները. բայց անկասկած որանք եկուորներ են, որոնք նուաճել են Նեղոսի հովտի այլացեղ բնակիչներին, իսկ բնիկներն էլ կազմեցին հասարակութեան ստորադրեալ և իրաւազուրկ դասակարգեր։

Հրէական ազգի հասարակական կազմակերպութիւնը, որ բաժանուած էր տասն և երկու ցեղերի և իւրաքանչիւրը կառավարուում էր հնագոյն ժամանակներում ցեղապետներով կամ աւագներով, նոյնպէս զուտ նահապետական էր։ Այս կազմը մասամբ այդպէս էր մնացել մինչև անդամ թագաւորների ժամանակ։

Հին արևելքի բռնապետութիւնների մէջ, — Բաբելոնում, Ասորեստանում, Մարաստանում, Պարսկաստանում, — արիական սկզբունքը պակաս զգալի էր, որովհետև բոլորը, ի նկատի չունենալով ծագումը, մեկի ստրուկներն էին կազմում։

Դա մարդկանց առաջին հաւասարութիւնն էր, ընդհանուր ստրկութեան տիսուր հաւասարութիւնը։ Մինչդեռ այստեղ ևս ցեղի և արեան առանձնաշնորհումները ամեն մի քայլափոխում պատահում են։ Պարսից ազգի տասը ցեղերի բաժանումը, պասսարգադների նախապատուութիւնը միւս ցեղակիցների նկատմամբ, նուաճած ազգերի մէջ պարսիկների տիրապետող դրութիւնը և սրա նման բազմաթիւ երևոյթներ պարզ վկայ են դրան։

Մինչև անգամ Փիւնիկիայում և Կարթագենում սեմական ցեղի առևտրական—հասարակապետութիւնները ըստ էութեան ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մի ծանրակիր տիրապետութիւն, որ բացառիկ կաստայական-ցեղական ազնուական դասակարգը ունէր իրաւազուրկ գաւառական բնակիչների և նուաճուած օտար ցեղերի վրայ։

Ազգագրական սկզբունքի զօրութիւնը աւելի ևս թոյլ էր կլասիք պետութիւնների մէջ։ Յունաստանի և Հռոմի ամբողջ պատմութիւնը մի կռիւ էր արևելեան ցեղական և իսկական պետութեան սկզբունքների, որոնց հիմք ծառայում է ոչ թէ ծագումը

և աւադութիւնը, այլ մարդու բարոյական արժանիքը։ Երկու երկրների սկզբնական հասարակական կազմակերպութիւնը համարեա նման են և ըստ բնաւորութեան մօտենում են արևելեան նահապետական ձևերին։ Հելլադի դիւցազնական շրջանի թագաւորները և Հռոմի թագաւորները ըստ իրենց իշխանութեան բնաւորութեան մօտենում են արևելեան նահապետներին։

Ինչպէս յունական աշխարհում Սպարտան, այնպէս էլ հռոմէական պետութեան մէջ էտրուսների ցեղը, յետոյ պատրիկների դասակարգը, կազմակերպած արիստոկրատական սկզբունքի համաձայն՝ ներկայացնում են ցեղական շահեր։ Ինչպէս Սպարտայի խիստ բաժանմունքները՝ սպարտիատների, լակեդեմոնացիների և իլոտների — յիշեցնում են բարբարոս արևելքի կաստաները, այնպէս էլ էտրուսների լուկումոնները և պատրիկ ցեղերի աւագները իրենց նահապետական իշխանութեամբ նոյնպէս արևելքն են յիշեցնում։ Անհատական բարոյական իրաւունքների վրայ հիմնուած պետական սկզբունքը բաւական զօրեղ արտայայտութիւն էր գտել Աթէնքի հանրապե-

ութեան մէջ, իսկ Հռովմում՝ պլեբեյների համայնքի մէջ։ Թէ այստեղ և թէ այնտեղ պետական և ցեղական սկզբունքների մէջ յառաջանում է խիստ կռիւ, բայց միայն ելքը տարբեր է։ Յունաստանում դարերով պատրաստած և քսանամեայ եղբայրասպան պատերազմով վճռուած այս կռիւը վերջանում է ցեղական սկզբունքի յաղթութեամբ, որ մարմնանում է դորական Սպարտայում։ Ընդհակառակը՝ Հռովմում պլեբեյների և պատրիկների դարաւոր կռիւը, որ մասամբ ունի նոյնպիսի նշանակութիւն, վերջանում է կայսրութեան, ինչպէս ռամկապետական դեկտատուրի հաստատութեամբ, այսինքն պետութեան դաղափարի յաղթութեամբ, որ այստեղ յաղթահարեց ցեղական նեղ սկզբունքը։

Այսպիսով հին դարու ամբողջ կազմակերպութեան և հասարակական կեանքում տիրապետող սկզբունք է հանդիսանում մի և նոյն դդայնութիւնը արիւնակցական կամ ցեղական յարաբերութեան ձևով. և թէպէտ մի քանի երկրներում, մանաւանդ Յունաստանում և Հռովմում այս բնական կապերը երբեմն մեծ, երբեմն փոքր յաջողութեամբ

դուրս էին ձգում նոր պետական և բարոյական տարրերի պատճառաւ, բայց այս վէճը վերջնականապէս չէր կարող վճռուել հեթանոսական հնութեամբ, որտեղ նիւթապաշտութիւնը խորը արմատ էր ձգել մինչև անգամ կրօնական հասկացողութիւնների,— այսպէս ասած — ամբողջ պատմական զարգացման աղբիւրի մէջ և հետևաբար անխուսափելի էր նրա արտայայտութիւնը նաև սոցիալական կարգերի մէջ։ Մենք տեսանք, չխօսինք էլ ասիական արևելքի մասին, որ նոյն իսկ կաստաների ձգտումները՝ ցեղական կենցաղավարութիւնից անցնելու քաղաքացիականին՝ ոչ այլ ինչ էին, եթէ ոչ միայն աւել կամ պակաս յաջող փորձեր։ Այս դորձում իսկ լիակատար յաղթութեան անդոր էր հասնել հին պետութիւնը, որի հիմքն էր ցեղական հիմնարկութիւններից վատթարագոյնը՝ ստրկութիւնը։ Իսկապէս ինչ էր ներկայացնում Աթէնքում հռչակաւոր պերիկլեան ռամկապետութիւնը, այդ անտիկ պետական կազմակերպութեան թագն ու պսակը, եթէ ոչ մի որ և է քսան հազար արտօնեալ քաղաքացիներով համարեա կէս միլիոն ստրուկ բնակիչների և օտարերկրա-

ցիներին շահագործութիւն։ Սակայն ոչ միայն կեանքում, այլ և հասարակական իդէալներում, իր ամենամեծ երազանքների մէջ հնութիւնը ցեղական հակացողութիւնների նեղ մակերևոյթից չկարողացաւ բարձրանալ։ Բաւական է յիշել Պղատոնի «հասարակապետութիւնը», որտեղ անտիկ աշխարհի «աստուածային խմաստունը» աւելի կատարեալ բան չէ գտնում իր իդէալական պետութեան համար, քան Սպարտայի ազնուապետական — ցեղական ձևերը հաշտեցրած միայն գիտութեան հետ։

Մարդկութիւնը աւետարանական վարդապետութեան՝ քրիստոնէութեան է պարտական, որ վերջնականապէս և անդառնալի կերպով դատապարտութեան մատնուեցին արիւնակցութեան նեղ հակացողութիւնները և նախապաշարումները։

Ցիրաւի, Փրկիչը թէ խօսքով, թէ դրծով, թէ վարդապետութեամբ և թէ իր կեանքով միշտ պարզաբանում էր այն միտքը, որ մարդու համար ամենամեծ արժէք պիտի ունենան հոգևոր կապերը և շահերը, որոնց համար պարտաւոր ենք զոհաբերել բոլոր ամենաթանկագին մարմնական ձգտումները։

«Նա չէ արժանի ինձ, ասում է Փրկիչը, ով իր ծնողներին կամ դստեր կամ տղային ինձնից շատ է սիրում; իմ յետևից նա չի գայ և իմ աշակերտ չի լինի նա, ով յանուն իմ չի ատի հօրը, մօրը, կնոջը և երեխաներին, որ թշնամի չի անուանի տնայիններին, արիւնակիցներին և իր սրտի մօտ մարդկանց»։ Միթէ այստեղ պարզ չէ՞ յայտնած այն միտքը, որ հոգևորի, ճշմարտութեան, բարութեան և խելացի բարձր ձգտումների համար մարդ պէտք է զրկուի իր բոլոր արիւնակցական կապերից և ձգտումներից, պէտք է զոհէ իր սեփական կեանքը, ինչպէս Փրկիչը զոհեց իր կեանքը մարդկութեան բարիքի և երջանկութեան համար։ «Եւ ով ինձ համար, ասում է նա, իր հոգին կորստեան կմատնի, կփրկէ նը-րան»։ Բայց այս տեսակէտից աւելի զարմանալի է Մարկոս աւետարանչի նկարագրած հետևեալ տեսարանը։ Փրկիչը տան մէջ սովորեցնում է ժողովրդեան և լսողների ամբողջ բազմութիւն շրջապատել էր նրան։ Այդ ժամանակ Նրա մօտ նստողներից մէկը ասում է. «ահա քո մայրը, եղբայրները և քոյրերը քեզ փնտրում են»։ Այն ժամանակ

Քրիստոս ցոյց տալով իր ուսկնդիրներին, ասում է. «ահա իմ մայրը և իմ եղբայրները. ով կատարում է իմ երկնաւոր Հօր կամքը, նա է իմ եղբայրը, քոյրս և մայրս»

Այս խօսքերը պարունակում են նոր մարդկութեան ամբողջ ապագան և սերմը այն արմատական յեղաշրջման, որը դարեր շարունակ կերպարանափոխում է նրա հասարակական յարաբերութեան ամբողջ կազմը։

Այդ ժամանակից սկսած արդէն մինչև անգամ կենդանիներին ևս յատուկ արիւնակցական բնազդը այլ ևս չի կարողանայ բացառիկ կերպով առաջնորդել մարդկանց յարաբերութիւններին, բայց աւելի և ամենից առաջ կգնահատուի անհատի բարոյական արժանիքը, ինչպէս նոր հասարակական կարգերի սկզբունք և հիմք։ Այդ ժամանակից պարտքի կոչը, ճշմարտութեան և բարութեան ձայնը լսելով, «որդին իր հարազատ հօր դէմ կելնէ և կբաժանուի, աղջիկը մօր դէմ և հարսը սկեսրոջ»։ Այդ ժամանակից սկսած խաղաղութիւնը կկորսուի, նոյն իսկ ընտանեկան յարկի տակը և ընտանեկան օջախը վէճերի և ընդհարումների ասպարէզ կդառնայ։ Բայց այդ վէճերի, մրցումաև կռուի և չփոթութեան ժամանակ երկիր կիջնէ Աստուծոյ արքայութիւնը, որ ճշմարտութեան, սիրոյ, ազատութեան և ամենաբարձր հոգևոր ներդաշնակութեան արքայութիւն է։

Մարդուս չէ յաջողւում էժանագին և թեթև կերպով բարոյական վաստակ ու յաղթութիւններ ձեռք բերել։ Այնպէս էլ այստեղ. նրանից պահանջւում է զոհեր, այն էլ ծանր և մինչև անգամ հակաբնական, բայց մի և նոյն ժամանակ անխուսափելի, որովհետև այդ զոհաբերութիւնների պայմանով միայն հնարաւոր է թէ անհատական կատարելագործութիւնը և թէ կեանքի ամեն մի ասպարիզում յառաջադիմութիւնը։ Ցեղական կապերը ըստ իւրեանց բնութեան մարդու բանաւոր գործունէութեան և բարոյական ազատութեան համար խիստ նեղ, սահմանափակ շրջան են ներկայացնում։ Նահապետական արևելքը իր մտաւոր անշարժութեան մէջ քարացաւ, մինչդեռ կլասիք աշխարհում, ուր առաջին անգամ յաջողութեամբ զարգացան պետական կեանքի սկզբունքները, մենք գտնում ենք պատմութեան առաջին շարժումը և զարգացումը։

Միայն քրիստոնեայ Եւրոպային յաջողեցաւ ունենալ քաղաքակրթութեան այնպիսի լայն զարգացում, որի մասին հնում ամենաթոյլ հասկացողութիւն անգամ չկար։

Սրանից յետոյ բնական է, որ զգայական կամ արիւնակցական բնազդերը տեղի տալով Աւետարանի հոգեւոր սկզբունքների աստիճանաբար աղդեցութեան, չէին կարող այլ ևս անարգել իշխել նաև միջազգային յարաբերութիւնների մէջ։

Ի հարկէ, բոլորին յայտնի է, թէ ինչպէս հին կեանքի այս կողմը զօրեղ կերպով պայմանաւորւում էր այդպիսի արիւնակցական ձգտումներով։ Մինչև անգամ ամենակրթուած յոյների աչքում օտարականները բնական թշնամի էին համարւում, որոց արհամարհանքից և ատելութիւնից զատ ոչ մի բանի արժանի չէին համարում։ Նրանց նշանաւորագոյն փիլիսոփաները, օրինակ Արիստոտելը, չէին կասկածում, որ բարբարոսները, այսինքն օտարները, հենց ծագմամբ արդէն նշանակուած են ստրուկ լինելու։ Այնպիսի համոզմունքով էր հռովմայեցին ամենածանր լուծ դնում իր նուաճած ազգերի վրայ, յաճախ չկասկածելով անգամ,

որ այդ արդարութեան և պարտքի հակառակ է։

Ընդհակառակը առաջին անգամ քրիստոնէութիւնը ազգերի մէջ քարոզեց փոխադարձ եղբայրական սէր։ Քրիստոնեան ամեն մի մարդու մէջ, ինչ ցեղից էլ լինի և ինչ ծագում էլ ունենայ, պիտի յարգէ նրա բարոյական արժանիքը և հրէան, որ խուսափում էր և ատում օտարականին, եղբայր դարձաւ սամարացուն։ «Այլևս խորութիւն չկայ ոչ հրէայի, ոչ հեթանոսի, ոչ ստրկի, ոչ տիրոջ, ոչ ամուսնոյ և ոչ կնոջ մէջ, որովհետև Քրիստոսով բոլորդ էլ հաւասար էք։» Այսպէս էր գրում հեթանոսների մեծահրաշակ առաքեալը, պարզելով այս խօսքերի մէջ մարդկութեան պատմութեան նոր շրջանը։

Ցեղերի նախկին թշնամութիւնների թուլանալովը չքանում էր նոյնպէս այն առանձնութիւնը և խորթութիւնը, որոնց պատճառով հին ազգերից իւրաքանչիւրը ապրում էր առանձին կեանքով իր տեղական, ներքին յարաբերութիւնների շրջանում, մնալով և ծանօթանալով օտարականներին՝ գլխաւորապէս պատերազմի միջոցաւ։

ճիշտ է, որ Սոցիկեան փիլիսոփայութիւնը անտեղեակ չէր կոսմոպոլիտ ձգտումներին, իսկ Հռովմը իր աշխարհակալութիւնների հսկայական համախմբման մէջ իր զէնքի ոյժով և օրէնսդրութեամբ մասամբ իրականացնում էր այդ։ Բայց միայն աւետարանը տարածելով ամեն կողմ ազգերի մէջ գործունեայ սէր և հոգևոր եղբայրութիւն, վերջնականապէս և հաստատուն կերպով հաստատեց համաշխարհային քաղաքակրթութեան գաղափարը իր անսպառ ապագայով և ընդհանրութեան օգտին հնարաւոր դարձրեց այն աշխատանքը, որով այժմ ամենահեռաւոր երկրներ և մարդկութեան ամենատարբեր ցեղեր կապուած են միմեանց հետ։

Ահա այսպիսի բնաւորութիւն ունի այն բարոյական յեղաշրջումը, որ քրիստոնէական վարդապետութիւնը արել է կեանքի բոլոր շրջաններում, թէ միջազգային քաղաքականութեան, թէ հասարակական յարաբերութիւնների և որ կարևորագոյնն է, մարդուս հոգու մէջ։

Մնում է այս հոգևոր յեղաշրջման վերջին տեսակի վրայ հայեացք ձգել, թափանցել հասարակական և քաղաքական կեանքի նախապատիւ նշանակութիւն ունենալու դաղափարի մէջ, որը Աւետարանի և անտիկ կեանքի ամբողջ կազմութեան ամենախիստ կոնտրաստներից մէկն է, քանի որ հին աշխարհում մարդը նշանակութիւն ունէր որպէս միայն և լոկ իւր պետութեան քաղաքացի։

Աւետարանը ուշադրութեամբ կարդացող ամեն մի մարդ, չի կարող առանց զարմանքի վերաբերուել այն անտարբերութեանը և նոյն իսկ արհամարհանքին, որպիսին արտայայտուում է նրա մէջ հասարակական գործունէութեան նկատմամբ։ Աւետարանը մի տեսակ կրաւորական կերպով է վերաբերում դէպի այն քաղաքական կարգերը, որ այն ժամանակ գոյութիւն ունէին հռովմէական կայսրութեան մէջ։ Նրանց համակրանք չէ ցոյց տալիս, բայց և դատապարտութիւն էլ չի կարդում։ Փրկիչը իր բոլոր ուշադրութիւնը դարձրել էր համարեա բացառապէս մարդու ներքին էութեան և անհատական բնութեան բարւոքման ու կատարելութեան վրայ։ Հետևապէս միայն ներքին կամ հոգեկան կեանքն էր նրա հոգա-

ծութեան առարկան։ Իսկ ինչ վերաբերում է հասարակական կազմակերպութեան այն բնաւորութեան ու ձևերին, որին պիտի մենք ձգտենք և առհասարակ պետական ու քաղաքական կենցաղին, աւետարանական վարդապետութեան մէջ դրա մասին ոչ մի դրական ցուցմունք չենք գտնում։

Առաջին թերևս հայեացքից այս գիծը կարող է պակասութիւն երևալ կամ գոնէ թերութիւն։ Մինչդեռ հէնց դրա մէջ է քրիստոնէական վարդապետութեան ամենամեծ կատարելութիւններից և առաւելութիւններից մէկը՝ հին բոլոր կրօնական սիստեմների նկատմամբ։ Համեմատութեան համար վերցնենք չինաց կինգը կամ ս. գրքերը, Ինդուսների վեդան, Իրանի զենդ—աւեստան կամ նոյն իսկ ամենաուշ երևան եկող զուրանը։ Կոն-փու-ցիոսի, Զրադաշտի, մինչև անգամ Մահմէդի կրօնական սիստեմների մէջ երբեմն զարմանալի լիակատար և հետևողականութեամբ շարադրած վարդապետութիւն ենք տեսնում պետական կազմակերպութեան, բարձրագոյն իշխանութեան բնաւորութեան, հպատակների փոխադարձ յարաբերութեանց և իրաւունքների ու պաշտօնեաների պարտականութիւնների մասին, մի խօսքով, կարծես պետութեան համար գրուած է մի գաղափար, նախագծուած է որոշ ծրագիր, որը պէտք է իրականանայ ազգի պատմական կեանքում։ Եւ իսկապէս ժամանակի ընթացքում այդ նախագիծը շատ թէ քիչ կատարելութեամբ իրագործուեց, իդէալը մարմնացաւ. բայց ինչ հետևանքի հասան. երբ հէնց որ այս խնդիրը իրագործուեց, ազգի ամբողջ հասարակական գործունէութիւնը, ամբողջ պատմական կեանքը կանգ առաւ։ Դարեր և հազարաւոր տարիներ անցան Չինաստանի և Հնդկաստանի գլխով, շատ յեղաշրջումներ, փոփոխութիւններ եղան, մինչև անգամ օտարներից յաղթութիւններ կրեցին այդ երկրները, իսկ պետական կազմակերպութիւնը մնում էր անշարժ, սառած և շղթայուած իր քարացած ձևերի մէջ։ Եւ այժմ էլ դրանք կանգնած են պատմական աշխարհի սահմանների յետև, առանց որ և է մասնակցութիւն ունենալու սրա շարժումներին, ներկայացնելով միաժամանակ իրենց մէջ դոյութիւն ունեցող կեանքի սա-

ռած կմախք, այն կեանքի, որը մի ժամանակ նրանց մէջ խաղում էր։ Մի և նոյն բանը տեսնում ենք և մահմէդական արևելքում։

Աւետարանի մէջ չկայ ոչ մի նման իդէալ։ Փրկիչը չէր յայտնում մարդկանց, թէ ինչպէս պէտք է կազմակերպել հասարակական կեանքը և կառավարութեան ինչպիսի ձև ընտրել, այլ աշխատում էր միայն մարդու անհատական հոգևոր բնոյթը աղնուացնել և բարձրացնել։ Աստուածային սրտագէտը դիտէր, որ հասարակական, քաղաքական և ամեն մի պատմական կեանքի միակ աղբիւրը մարդկային ոգին է և որքան նա կատարեալ է, այնքան աւելի կատարեալ կլինին և այն բոլորը, ինչ որ նրանից ծագում է։ Հետևապէս մարդու գործունէութեան համար որ և է մշտական ձևեր նշանակել, նրա ձգտումների վերջին սահմանը դնել, նշանակում է դադարեցնել նրա յառաջադիմութիւնները, որոնք իրենց բնութեան շնորհիւ նախասահմանած են անվերջ զարգացման համար։ Փրկիչը միայն մի պատուիրան, մի անմատչելի իդէալ է ցոյց տուել մարդկանց. «եղէք կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն է կատարեալ»։

Հետևապէս մարդու հոգևոր կեանքի անընդհատ զարգացումը կդադարի, երբ աստուածութեան նման կդառնայ։

Այսպիսով քրիստոնէական կրօնի այս յատկութեան մէջ դանում է մեր քաղաքակրթութեան անսահման ապագայի գրաւականը. քրիստոնէի ոգու, նրա կատարելագործուելու անսպառ ընդունակութեան մէջ, քաղաքակրթութիւնը միշտ կգտնի իր հեռաւոր նորոգման և զարգացման աղբիւրը։

Ահա այս է աւետարանի ամբողջ բնաւորութիւնը մի քանի գլխաւոր կէտերի մէջ ամփոփած։

Այս բոլորից յետոյ պէտք է համոզուել, որ Աւետարանը ոչ միայն յառաջադիմութեան թշնամի չէ՝ ինչպէս մի ժամանակ միջնադարեան կաթոլիկ հոգևորականութեան շահասէր մեկնութիւնների մէջ կարող էր երևալ, այլ ընդհակառակը իր մէջ պարփակում է յառաջադիմութեան բոլոր առհաւատչեքը և պայմանները։ Տենչալով աստուածային ճշմարտութեան, աղբերը հէնց որ ս. Գիրքը դուրս քաշեցին անարժան ձեռքերից—և մարդկային խելքի արագ յառաջադիմութիւնները, որ սկսուեցին XVI

դարուց, իսկոյն աշխարհին ցոյց տուին նրա բարձր քաղաքակրթիչ դերը։

Միւս կողմից դժուար չէ ըմբռնել նոյնպէս, թէ ինչպիսի պատկառելի տեղ է բռնում քրիստոնէութիւնը այն տարրերի շարքում, որոնցից կազմուել է նոր Եւրոպայի քաղաքակրթութիւնը։

Ճիշտ է սրա վերաբերմամբ գիտնականների կարծիքը բաւական տարբեր են։ Գերմանական պատմաբանները ըստ մեծի մասին առաւելութիւն տալիս են գերմանական սկզբունքին, որի թարմ ոյժով մարդկութիւնը վերածնուել է նոր կեանքի համար։ Հումանիստները և առհասարակ կլասիք հնութեան երկրպագուները մեր պատմական կեանքի գլխաւոր հիմքը տեսնում են անտիկ աշխարհի ժառանգութեան մէջ։ Ֆրանսիացիք իրենց սովորութեան համաձայն աշխատում են հակառակ հայեացքները հաշտեցնել և այս մտքով ամենայայտնի փորձը պատկանում է ինչպէս յայտնի է Գիզոյին։

Ճանաչելով, որ իւրաքանչիւր հայեացքի մէջ որոշ չափով ճշմարտութիւն կայ, մենք իրաւունք ենք համարում նկատելու,

թէ որչափ էլ կարևոր է եղել միւս սկզբունքների ազդեցութիւնը, յամենայն դէպս մեր պատմական կազմի և մեր կրթութեան զարգացման մէջ Աւետարանը այնքան նախապատուութիւն է վայելում, որքան կրօնը առ հասարակ նախապատիւ տեղ է բռնում մարդկային կեանքի բոլոր միւս շահերի և երևոյթների վերաբերմամբ։ Որովհետև կրօնը ամենաընդարձակ իմաստով այն բարձրագոյն բարոյական համոզմունքների գումարն է, որոնցով մարդն առաջնորդւում է իր ամբողջ կեանքի մէջ։ Նրա մէջ պարունակւում են բարութեան, ճշմարտութեան, արդարութեան և օրէնքի հիմնական հասկացողութիւնները, մի խօսքով այն յաւիտենական հոգևոր բարիքների հիմունքները, առանց որոնց անհերևակայելի է ոչ զարգացողութիւն, ոչ երջանկութիւն, ոչ էլ կեանք։

Ամբողջ արտաքին դրդիչներ՝— հասարակութիւն, քաղաքականութիւն, զարուեստ և գիտութիւն, ամենուրեք և ամեն ժամանակ եղել են և կլինեն այդ ծայրագոյն սկզբունքների ոգու և յատկութիւնների արտայոլում։ Ի զուր չէ, որ նոյն իսկ «ռելիգիա» բառը զարմանալի կերպով

ցույց է տալիս իր արտայայտած գաղափարի բարձր նշանակութիւնը։ Religio religare նշանակում է կապել, միացնել։ Դրա համար կրօնը այն հոգևոր կապն է, որով մարդը յարաբերութիւն է հաստատում իր ամբողջ շրջապատի, այսինքն բնութեան, մարդկանց և աստուածութեան հետ և այսպիսով դառնում է իր կեանքի կեդրոն և աղբիւր։

Բ.Պ.Բ. в Лнгр.
р. 1938 г.
А № 7/240

Վրիպակներից կարեւորները

Էջ.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
8	ն. 7	չն նասի	չնասի
»	վ. 8	կերակուրը	կերակուրի ծախսը
12	վ. 9	այս	այս՝
13	ն. 11	reepe	recipe
15	ն. 2	de Auguste	d' Auguste
16	ն. 5	քաղաքացուց	քաղաքացուց,
17	վ. 5	էին	էին,
19	վ. 12	է	էր
22	ն. 8	միւս	մի
23	վ. 11	մէջ	մէջ անալիկ
25	վ. 2	սատցուեց	սպառուեց
»	» 8	ծէս	մի ծէս
»	» 9	հոգին	ոգին
»	» »	էր	է
27	ն. 4	ձեւերով	ձեւերով էլ որ
28	ն. 7	որ	որ այդ արդէն
32	վ. 12	ոչ	
36	վ. 11	ճնչման	ճնման
40	ն. 12	դեկտատուրի	դիկտատուրայի
47	ն. 14	ամուսնոյ ... կնոջ	արուի ..... էգի
49	վ. 1	քաղաքական	քաղաքական կենսքից անհատական
50	ն. 4	լիակատար	լիակատարութեամբ
51	վ. 10	երբ	
53	վ. 2	երբ	երբ մարդը
56	վ. 7-8	դատնում	դարձնում

ՀԱԲ
2-

Մամուլի տակ է՝

Պրոֆ. Ն. Սուվորով. Եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները։ Թարգմանեց Պետրոս Տէր-Յարութիւնեան։

Գինն է 20 կոպ.

Ա.Թ.
ՊՄ2

3144
A
2-232 a